

արուեն, — բայց այն ժամանակ, ի հարկէ եթէ չենք ուղում թաւ-  
թակներ պատրաստել, եզր արդէն 1 կամ 2 տարի գծային  
սիստեմով վարժուել են: Անհամեշտ ենք համարում այդ պայ-  
մանը, որովհետև միայն այդ դէպքում ըստ ամենայնի աշա-  
կերտի առաջ ձայնամիջոցների գաղտնիքը բաց կլինի՝ մե գաղտ-  
նիք, որ գաշնակի ( гарմոնիկ ), բազմաձայն երգեցողութեան  
հիմքն է կազմում:

**Թափ. Սպ. Մկրիման.**



### ԱՆՍՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՍՍՆԲՈՒԹԻՒԹԻՒՆ.

**ՄԵՇ ԵՂՋԻՒՄԱԽՈՐ Ա.ՆԱ.ՍՈՒՆՆԵԲԼ.**

Այստեղ պահանջուր գրքաւ բարեկարգ պատճեն ու պահու մտնել:

Կաթի զործարանը.—Յայտնի է, որ կաթի թէ քանակի  
և թէ յատկութեան վերայ ցեղը, խնամքը, մանաւանդ կերը  
մեծ աղդեցութիւն են ունենում: Կան նաև ուրիշ երկրորդական  
պատճառներ, որոնք գարձեալ որոշ չափով աղդում են: Անաս-  
նապահութեամբ պարապող ամէն ոք տեսած կլինի, թէ լնչպէս  
միւնոյն կերն ուտող, բայց տարբեր պայմաններում ապրող  
մի կով տարբեր քանակութեամբ և յատկութեամբ կաթ է տա-  
լիս: Սորա պատճառները բարդ են և բազմապիսի, բայց աւելի  
շատ բան կախուած է այն գործարանի—գեղձի կաղմութիւնից,  
որտեղ պատճառատեռում է կաթը:

Կաթնային գեղձը բաղկանում է ահագին քանակութեամբ  
փամփիշտիկներից կամ վանդակիկներից, որոնք միաւորող ան-  
կուածի օգնութեամբ միացած են և շշապատուած ճարպային  
հիւսուածքով: Փամփիշտիկներից կաթնատար նեղ անցքերը աս-  
տիճանաբար միանալու, մեծանում են և վերջը կաղմում կաթ-  
նամքարներ, որոնցից, յետոյ գուրս են գալիս առանձին խողո-  
վակներ պտուիների մէջ. սոցա վերևի մասը կոչուում է հիմք,  
իսկ ներքեւինը կաղմում է իսկական պտուկը: Այս վերջնի մէջ  
են գտնուում մկանային թելերը, որոնց ամփոփումը և կընա-  
տումը կենդանու կամքից անկախ է: Այս այդ մկաններն են

պատճառը, որ պառեկը կուրծը կաթով լեզն եղած դէպքում իսկ չէ ձգւում, լայնանում, մինչդեռ հիմքը բաւականաշափ ընդարձակում, ձգւում է: Մեծ քանակութեամբ լաւ կաթ ստանալու համար կարենոր է ուշք դարձնել, թէ արդեօք ի՞նչպէս է գործում այն գեղձը, որ կաթ է արտադրում և թէ այդ գեղձը կաթ պատրաստելու համար որբան շատ նիւթեր ունի (այսինքն թէ, որբան արիւն է հոսում գէպի կուրծը): Այս երկու հանդամանքներն ել ուղղակի կախումն ունեն կանոնաւոր կթելուց, ստինքը կանոնաւոր վիճակի մէջ պահելուց, կենդանու ստինքի զարգացման վերայ ուշադրութիւն դարձնելուց և հիւանդ ստինքը կանոնաւոր կերպով խնամելուց: Գեղձը գործում է գլխաւորապէս մեքենայական գրգիռների աղջմամբ, որ տեղի է ունենում կամ կթելու ժամանակ կթողների մատների միջոցով, կամ հորթի գնչով: Ահա այս է պատճառը, որ որբան վաղ գրգոռւի կովի, կամ աւելի լաւ ասած, երինջի ստինքը, և որբան յանախ, երկարատե և հմուտ կերպով տեղի ունենան այդ գրգռումները, այնքան աւելի պէտք է յուսալ, որ գեղձը կսկսէ եռանդով գործել:

Կարի որակի եւ քանակի վերայ ազդող պատճառներ. — Կովի տուած կաթի թէ քանակին և թէ յատկութիւնը շատ պատճառներից կախումն ունի. թուենք այդ պատճառները.

ա. Անհատական կողմբ. Կովի կաթնատու լինելը կախուած է ամէնից աւելի անհատական տրամադրութիւնից, որի համար նշանակութիւն ունեն կաթնային գեղձի զարդացումը և ցոյց տուած գործունէութիւնը: Որբան ուղում են թող խնամք տանեն, լաւ կեր տան՝ ալպարդիւն կլինի բոլորը, եթէ կովի ընականից կաթնոտ չէ:

բ. Ցեղը. Ամէն մի անասնատէօ պարտաւոր է իմանալ, թէ իւր կովերը ո՞ր ցեղին է պատկանում. կան մեծ քանակութեամբ, բայց ոչ իւզոտ, կաթ տուող կովեր և կան, ընդհակառակը, թէպէտ քանակութեամբ պակաս, բայց թանձը, իւզոտ կաթ տուող կովեր: Ո՛վ որ մտադիր է կովերից մեծ քանակութեամբ կաթ ստանալ, պէտք է պահէ բացառապէս ցած տեղերից, հովիտներից, հարթութիւններից սերուած կովեր, որովհետեւ սորա աչքի են ընկնում իւրեանց կաթի առատութեամբ. իսկ ում համար կարենոր է աւելի կաթի յատկութիւնը, պէտք է ընտըէ լեռնային կովեր:

Փոքձերը ցոյց են տուել, որ հովիտների, այն է՝ հովանդիայի, ոլդենքուրդի և այլ տեղերի կովերը մեծ քանակութեամբ

կաթ են տալիս, միայն աղքատ են լինում պինդ նիւթերով և ճարպով, քան լեռնային՝ Ալգառուզի, Սիմմենթալ, Պինցգառուզի, Ֆրեյթարդի և Անգլիական (ոչ բոլոր) կովերը: Հաւանական է, որ անառնապահութեան վերայ տեղի ունեցող նորագոյն աշխատութիւններն այնքան առաջ գնան, որ ժամանակին կովերը առատ կաթ տալու հետ միասին կարողանան տալ նաև իւղուած կաթերը բաղադրիչ նիւթեր պարունակող կաթ:

Առաջ ենք բերում մի աղիւսակ ցոյց տալու համար կաթ-չափու կովերի ցեղը և նոցա տարեկան տուած կաթի միջին չափը:

1. Հոլլանդական . . . . . 300 վեդրօ

2. Սիմմենթալ . . . . . 300 »

3. Շուից 3 Զուիցերիա . . . . . 275 »

4. Նորմանդական . . . . . 270 »

5. Ֆրանդրական (Բելգիա) . . . . . 260 »

6. Անգլիա (Պրուսիա) . . . . . 250 »

7. Ալգառուզի (Բաւարիա) . . . . . 220 »

8. Զերգեյի (Զերգեյի կղզում) . . . . . 215 »

9. Խոլմօգօրի . . . . . 180 »

10. Բրիտանական . . . . . 155 »

11. Գուրհամի (Անգլիական) . . . . . 155 »

12. Ռէձնիի (Էստլիա) . . . . . 240 »

Այս աղիւսակից մենք տեսնում ենք, որ հոլլանդական կովին ամէնից աւելի կաթ է տալիս, բայց ջրալի լինելով, շատ իւղ չունի: Նկատուած է, որ հոլլանդական կովերը վերջերս ակնել են պակասեցնել իւթեանց կաթը: պատճառը համարւում է այն, որ այժմ հասարակ կեր են դորձ դնում:

Ըստհանրապէս կովերի օգտակար կամ զարգացած ցեղերը աւելի ջրալի կաթ են տալիս, քան միւսները. բացառութիւն են կազմում Զերգեյի կովերը, որոնց կաթը շատ իւղոտ է: Առաջ ենք բերում նաև մի ուրիշ աղիւսակ ցոյց տալու համար այլ և այլ ցեղի պատկանող կովերի կաթի պարունակած իւղի քանակը:

Հոլլանդական կովերը . . . . . 2,5—3 %

Անգլիա . . . . . 3,2 »

Ա. Հ. Շիրի . . . . . 3,4 »

Ալգառուզի . . . . . 3,5 »

Շուիցի . . . . . 4—5 »

Զերգեյի . . . . . 3,0—3,2 »

Շորտգօրնի . . . . . 3,5—3,8 »

Սլմմենթալի		3,5	>
Խոլմօգօրի		3,5—4	>
Եաթօղլաւի և գիւղական հասարակ կովերը	4—5		>

Գ. Կարճաբերութեան շրջանը կամ տեւականութիւնը. — Կաթնարեցութեան շրջանն այլ և այլ կովերի համար տարբեր է լինում: Մինչդեռ ոմանք (շատ քիչ դէպքեթում) կթւում են մինչև միւս անգամ ծնելը ուրիշները ծնելուց համեմատարար կարձ ֆամանակ յետոյ կտրւում են կաթից: Սովորաբար լաւ կովերը մօտաւորապէս 300 օր կաթ են տալիս և անկիթ մնում մօտաւորապէս 65 օր: Զյզացած (զըսը մնացած) կամ բերքի ընդունակութիւնից զրկած կովերը շատ երկար ֆամանակ կարող են կթուել, երբեմն նոյն իսկ մի քանի տարի:

Կաթնարեցութեան այլ և այլ շրջաններում կովի տուած կաթի քանակը տարբեր է լինում: Սովորաբար երբ կովը ծնելուց յառաջացած թուլութիւնից կազդուրուում, իւր ընական վիճակի մէջ է մտնում, կաթը աստիճանաբար շատանալով հասնում է ամենաբարձր կէտին, որից յետոյ կամաց կամաց սկսում է պակասել: Այս դէպքում ես կովերի մէջ նկատելի է խիստ մեծ տարբերութիւն. մինչդեռ մէկը ծնելու հէնց առաջին շաբաթում մեծ քանակութեամբ կաթ տալուց յետոյ յանկարծ սկսում է պակասեցնել, մի այլ կով, ընդհակառակը, սկզբներում աննշան քանակութեամբ կաթ է տալիս, բայց այդ չափը երկար ֆամանակ մնում է նոյնը և վերջերը նոյն իսկ երեմն աւելանում է: Կաթի պակասելը մեծաւ մասամբ աստիճանանաբար չէ տեղի ունենում:

Առհասարակ մինչև այժմ եղած գիւղութիւնները ցոյց են տուել, որ ծնելուց յետոյ որգան առաջ դնանք, այնքան աւելի կշատանայ կովի կաթի մէջ պինդ նիւթերի, մանաւանդ ճաղպի քանակը, և նկատուած է, որ կաթի քանակութեան պակասելով աւելանում է նորա մէջ թանկագին նիւթերի չափը: Եւս բարանչիւր կենդանու առանձնացատկութիւններն անկասկած կաթի բաղադրիչ մասերի փոփոխութիւնները վերայ որոշ ազդեցութիւն կունենան. մինչդեռ մի կովի կաթի մէջ եղած չորպինդ նիւթերի քանակը անփոփոխ է մնում, միւսինը զգալի փոփոխութիւն է կրում: Այսպէս, օրինակ, 1889—90 թ. Գետատինգինի գիւղատմտեսական լինուածուառում պահուած երեք կովի վերայ կաթնատւութեան ամբողջ ընթացքում շաբաթական երկու օր, օրական երկ-երկու անգամ կատարած հետազօտութիւնները հետեւալ արգիւնքն են ցոյց տուել:

Ե Ե Ա Մ Հ Ն Ե Ր Ը	ՄՆԵԼՈՒ յետոյ անմիջապէս		ՄՆԵԼՈՒ յետոյ Տ. Ի 7. Ի 9. Ի	
	Ակզրի 4 շաբարուայ մէջ.		ամիսներում.	
	Զոր նիւթ.	Ճարապ	Զոր նիւթ.	Ճարապ
Սիմմենթալ	12,60 %	3,70 %	13,16 %	4,16 %
Օստֆրիզլանդի	11,14 »	2,51 *	11,18 »	2,89 »
Զերգչյի	14,05 *	4,82 *	16,86 »	6,52 *

Այս աղիւսակից մենք տեսնում ենք, որ Սիմմենթալ և Զերգչյի ցեղի կովերի կաթը հարուստ է լինում չոր—պինդ նիւթերով և իւղով և կաթնարերութեան ընթացքում այդ նիւթերի քանակը զգալի կերպով աստիճանաբար աւելանում է, մինչդեռ Օստֆրիզլանդի կովերի կաթը աղքատ է մ'ում այդ նիւթերով, բայց համեմատաբար հարուստ իւղով:

Փոքձերը ցայց են առւել, որ կաթի բնական եղանակով պահանջու առաջը կարելի է առնել, միայն պէտք է հարուստ նիւթերով համապատասխան կեր տալ, որի հետ սերտ կապ ունի նաև կենդանու մարմնի քաշը: Վերջնիս պակասելը պարզ ապացոյց է կերի անբաւարար լինելուն, որի պատճառով և շատ արագ կերպով պակասառմ է կովի կաթը: Կաթնարերութեան ընթացքում, եթէ կովի քաշը կարողանանք միևնույն աստիճանի վերայ պահել, կարելի կլինի յաջողութեամբ կռուել կաթնային գեղձի այդ ընութեան դէմ, և հարկադրել որոշ չափով կաթ արտադրուելուն, և որովհետեւ այդ նպատակին հասնել կարելի է միմիայն շատ լաւ ոնունդ մատակարարելով կովերին, ուստի և պէտք է առանձին ուշագրութիւն գարձնել նպատակայարմար եղանակով կերակրելու վերայ:

Դ. Կերի տեսակը և նորանում եղած սննդարար նիւթերն ես մեծ աղքեցութիւն են ունենում կաթի կազմութեան վերայ: կաթի տւելանալու կամ պակսելու պատճառներց գլխաւորն անշուշտ սնունդն է: Թէպէտ կերի մասին առանձին գլխում բաւական մանրամասնօրէն խօսուել է, բայց աւելորդ չի լինի լրացնել և պարզել մի քանի կարեռ կէտեր, որոնք մեծ նշանակութիւն ունեն կաթնարեր գործարանի՝ գեղձերի գործունէութեան նկատմամբ: Խնձոքէս միւս կենդանիներին, նոյնպէս և կովերին անբաւարար քանակութեամբ սննդարար կեր տալով, մարդ վնասած կլինի իւր արդիւնարերութեան: Կերի սննդարար նիւթերից սպիտակուցը կաթի կազմուելու համար խիստ կարեռ նշանակութիւն ունի: Նորա միջի պինդ նիւթերը սպիտակուցային նիւթերի փոխանակութիւններից են առաջանում: Կերի մէջ որքան շատ լինեն սպիտակուցային նիւթեր, նոյնքան աւելի եռանդով տեղի կունենայ այդ փոխանակութիւ-

նը և նոյնքան շատ կաթ կարտադրուի; Եթէ սպիտակուցը քառակութեամբ անբաւարար է՝ խիստ զգալի ներդործութիւն է ունենում կաթնային դեղձի դործունէութեան վերայ; Ոմանք կաթում են, թէ ընտիր տեսակ կով պահելով կունենան նաև ընտիր և առատ կաթ; Բայց տեսակի հետ անհրաժեշտ է, որ կերն ես ընտիր լինի և առատ:

Կաթի ինչպէս առատութեան, նոյնպէս և ազնուութեան վերայ բարերար ներդործութիւն է ունենում խոտաւէտ արօտա ներում արածելը, որովհետեւ կաթնային դեղձի դործունէութիւնը խիստ գրգռւում է, երբ կենդանին ստանում է առատօրէն զեւրամարս, մննդարար նիւթերով հարուստ կեր և մաքուր օդ; Այստեղ առաջ ենք բերում կիւ քաղաքի փորձերի կայարանում պահած 10 անգելի կովերից 1877—1878 թ. ստացած կաթի համեմատական չափը: Դոցած ծինը տեղի էր ունեցել հոկտեմբեր և փետրուար ամիսների միջոցներում և կերը կարելի է 4 դլիսաւոր շրջանների բաժանել:

1. Ալսոռում մնացած և ձմեռնային չոր կերով սնուած,
2. Ալսոռում մնացած և կանաչ կերով սնուած,
3. Արօտներում սնուած, և
4. Այնպէս, ինչպէս առաջին շրջանում.

Տամբ կովերից ամենայն օր ստացում էր մօտաւորապէս հետեւել քանակութեամբ կաթ:

Ամբողջ տարուայ ընթարքում միջին թուով 4 կ. 27, 7 գրվ.

Առաջին շրջանում մինչև ապրիլի 30-ը 7 » 1, 3 »

Առաջին շրջանի վերջին շաբաթը 6 » 14, 5 »

Երկորդ շրջանում մինչև մայիսի 15-ը 6 » 24, 2 »

Երրորդ շրջանի առաջին շաբաթում 6 » 27, 78 »

« » Երկրորդ շաբաթում 7 » 1 »

« » Երրորդ շաբաթում 7 » 6, 2 »

Վերջին շաբաթում • • • 1 » 17, 3 »

Առաջին շրջանի ժամանակ ամենաշատ

կաթ է ստացուել փետրուարի 19-ին • 7 » 16 »

Երրորդ շրջանի ժամանակ ամենաշատ կաթ

է ստացուել մայիսի 24-ին • 7 » 27, 4 »

Առաջ բերած թուանշաններից պարզ երևում է կաթնաբեր գեղձի դործունէութեան փոփոխութիւնները: Մինչդեռ ձմեռը ամսուում սնունդ ստանալիս օրական ստացած կաթի քանակը իջել է 6 կ. 14, 5 գրվ., արօտներում արածելով կրկին բարձրացել է մինչև 7 կ. 6, 2 գրվ. և հետո այդ ժամանակ է, օր մայիսի 24-ին կաթի քանակութիւնը հասել է

մինչեւ 7 փ. 27, 4 գրվ., մի չափ, որ երբէք ուրիշ անդամ չէ եղել, չնայելով որ կաթնարերութեան շրջանի սկզբնեառում, երբ ախոռում էին սնունդ տալիս, օրական ստացուած կաթի քանակը հասել է 7 փ. 16 գրվ.; Բայց կաթի այնքան առատ արտադրուելը, որ արօաներում արածելու հետևանք է, երկար չի տևել և արդէն մի քանի շաբաթ անցնելուց յետոյ զգալի կերպով ընկել է և յետոյ աւելի և աւելի պակասել, մինչ դեռ առաջ նա երկար ժամանակ մնացել էր մօտաւորապէս միևնոյն բարձրութեան վերայ; Այն կոլերը, որոնք ախօսի մէջ են սնում, չոր խոտով, հացահատիկների ալիւրով և առհասարակ ընակի նիւթեր պարունակող կերով, շատ իւղուա կաթ կը տան, իսկ նորա, որոնք ջրալի կեր կամ կանաչ խոտ են ու առում, կտան, թէպէտ առատ, բայց ոչ իւղուա կաթ և այդպիսի կաթի մէջ ճարպ և պանրածին սակաւ կդանուի; Ահա այսէ պատճառը, որ աշնանային և ձմերային կաթը աւելի հարուստ է լինաւմ պինդ նիւթերով, քան գարնանային և ամառնային կաթը; Բուսականութեամբ հարուստ չոր արօաներում արածող կովերը աւելի թանձր կաթ կտան, քան խոնաւ ճահճային տեղերում արածողները; Սննդեան նիւթերի մօտաւոր համեմատութիւնը ցոյց տալու համար առաջ ենք բերում հետեւալ աղիւսակը.

6 փութ հասարակ չոր խոտը համապատասխան է՝

24—30 փ. կանաչ խոտի,

16, 5—18 » լազուտի կանաչ տերևների,

5 » չոր առուսյատի,

6 » չոր վայրի առուսյատի,

18 » ցորենի յարգի,

12 » գարու յարգի,

11 » բատատի

17 » ճակնդեղի,

2, 5—3 » լազուտի ալիւրի,

2, 5 » ցորնի ալիւրի,

3, 5—4 » ցորնի թեփի,

2, 5 » կոստոնի, և այլն:

ե. Հողը եւ նորա համապատասխան բուսականութիւնն եւ մեծ աղղեցութիւն ունին կաթի յատկութեան, մանաւանդ համի վերայ: Նվեյցարական, կովկասեան և առհասարակ լեռնային արօաների առանձնայատկութիւնիցն է շվեյցարական պանրի համը և անուշահատութիւնը: Այս գէպքում նշանակութիւն ունի հանգային աղերի բաղադրութիւնը, որ այլ և այլ հողերի մէջ

տարբեր է լինում: Միաժամանակ աղդում են նաև արեգակի լուսաւսը որութիւնը, երկրի բարեխառնութիւնը և օդի խոնաւութիւնը:

զ. Կովկասի տարիքը, բացօքեալ շարժումները, կիման, օդի տափարինն եւ մաքրութիւնը, մարմնի մաքրութիւնն եւ այլն:—Կովկասնքի որոշ շրջանում նիւթեքի փոխանակութեան արագութիւնը հասնում է ամենաբարձր աստիճանին և հէց այդ ժամանակ մկառւմ է արտագրուել ամենամեծ քանակութեամբ կաթ: Առաջիններից սկսած մինչև երրորդ կամ չորրորդ ձինը, այսինքն մինչև 7 տարեկան հասակը, կաթն աստիճանաբար աւելանում է և հասնում է ամենամեծ չափի, որից շետոյ մկառւմ է նուազել. մինչև 11—12 տարեկան հասակը դեռ բաւարար չափով կաթ է ստացուում, ապա պէտք է կենդանուն սպանդանոց ուղարկել: Բայց այս ընդհանուր կանոնը այլ և այլ պատճառներով շատ բացառութիւններ ունի: Հիմք կայ ենթագրելու, որ որքան կովը մեծանում է, այնքան աւելի նորա կաթը ազնուանում է և իւղօտ գառնում, թէպէտ երբեմն պատահում է նաև հակառակը:

Բաց օդի մէջ չափաւոր շարժումները շատ օգտակար են կովերին, նպաստում են նիւթեվի վիթանակութեան արագաւաճուն: Առողջութեան և կաթի առաստութեան: Եթէ հանգամանքները ներեն, պէտք է միջոց տալ աղատ շարժումներ գործելու: Կան տեղեր, որտեղ կովերին աշխատեցնում են, և եթէ այդ աշխատութիւնները չափաւոր լինեն, կաթը կաւելանայ: Խըն ըստ լինքեան հականակի է, որ աշխատող կաթնատու կովերի մնունդն ես աւելի առատ պէտք է լինի:

Կայցեղիքի գիւղատնտեսական ինստիտուտում երկու կովերի վերայ փորձեր են կատարուել իմանալու համար, թէ աշխատութիւնը ի՞նչ աղդեցութիւն է ունենում կաթի վերայ: Կովերին պարբերաբար մի շաբաթ աշխատեցնում էին օրական 9—10 ժամ և մի շաբաթ հանգիստ տալիս և այդ ժամանակուայ ընթացքում նշանակում էին կաթի քանակութիւնն և բարագրութիւնը: Կովերով վարել են հնձած տեղեր, սայլի լծել խոտ են կըել և այլ նման աշխատութիւններ կատարել: Ահա փորձի արդիւնքը.

## Ա. Կ. Պ.

## Աշխատութեան միջոցներ.

Կաթի քանակը . . . . 21 գրվ.

Չոր նիւթեր . . . . 13, 3 °

Ճարպը . . . . 4, 3 \*

Չոր նիւթերի քանակը 3 գրվ.

Ճարպի քանակը . . . . 1 \*

## Հանգստութեան միջոցներ.

23 գրվ.

13 °

4 \*

2, 8 գրվ.

0, 99 »

## Բ. Կ Ա Վ

Ա.ԵԽԱՏՈՒՐԵԱՆ ՄԻՋՈՑՈՒՄ.		Հ.ԱԲՈՏՈՒՐԵԱՆ ՄԻՋՈՑՈՒՄ.
Կաթի քանակը •	• 11, 6 գրվ.	12, 7 գրվ.
Զոր նիւթերը •	• 13, 3 °	13, 2 °
Ճարպի •	• 4, 3 »	4, 2 »
Զոր նիւթերի քանակը •	1, 6 գրվ.	1, 5 գրվ.
Ճարպի քանակը •	• 0, 48 *	0, 5 *

Ամերիկայում մասնագետներից ոմանքը ցոյց են տուել կովի յոզնածութեան աղցեցութիւնը կաթի յակութեան վերայ այսպէս. վեր են առել ճանապարհորդութիւնից քիչ յոզնածերեք կովեր և առաւօտեան և երեկոյեան կթել են, իւրաքանչիւրեց ստացուած կաթը վերլուծել են իւրեանց բազագուչ մասերի. առաջին կովի կաթից յաջորդաբար ստացուել է 3, 72°, 3, 6°, 2, 6°, 2, 9°, 3, 4° կարագ, մինչդեռ առաջ պարունակում էր միշտ 3, 4° կարագ. Այս փորձերից երեսում է, որ 6-րդ անգամ կթուելուց յետոյ, այսինքն ճանապարհորդութիւնից 3 օր յետոյ ստինքի գեղձերը իւրեանց ընական վիճակի մէջ կլինեն:

Միւս երկու կովերի տուած կաթից ստացուել յաջորդաբար՝

Երկրորդից՝ 3, 2°, 8, 3°, 6, 5°, 4, 2°, 3, 6°  
Երրորդից՝ 1, 5°, 2°, 4°, 3, 8°, 7, 2°, 11, 1°, 5, 3°,  
4, 7°, 3, 9°: Աւելի ուշադրութեան արժանի է երրորդ կովի տուած կաթը, որ սկզբում քիչ ( $1, 4^{\circ}$ ) կարագ էր պարունակում, ապա երթարկ աւելանում է և երրորդ անգամ կթուելիս յանկարծ առաւօտեան բարձրանում է 7, 2°, երեկոյեան 11, 1°. Վերջապէս ինսերորդ անգամ կթած կաթն իւր ընական վիճակն է ընդունում: Միւսոյն փորձերը ցոյց են տուել, որ կենդանիների յուղմունքն ևս աղցում է կաթի քանակութեան վերայ. յուղուած կովը շատ քիչ կաթ կտայ:

Փորձերը ցոյց են առւել, որ կովերին շատ աշխատեցնելուց, ուժերը լարելուց կաթի քանակը սաստիկ պակասել է, իսկ ճարպին աւելացել. կաթի միւս բազագուչ մասերը համարեան վիճակից են մնացել: Յոզնածութեան աղցեցութիւնը աւելի դգալի է լինում երկրորդ անգամ կթելիս. այս անգամ են ճարպի քանակութեանն աւելանում է:

Կիման, օդի ստաքութիւնը, խնամելու եղանակը և ախոռն ու կովերի մարմինը մաքսւը պահելը աղցում են կաթի առաւտութեան վերայ: Զմրան սաստիկ ցրտութիւնն և ամրան սաստիկ տաքութիւնը և մանաւանդ բարեխամութեան զգալի փո-

փոխութիւնները վնասակար են կաթի թէ առատութեան և թէ յատկութեան կողմից։ Ընդհակառակը բարեխառն և խոնաւ կլիմաները նպաստաւոր են։ Ահա այս է պատճառը, որ շատ կաթ տուող կովերը բարեխառն և խոնաւ երկրներից են։ Կլիման աղջեցութիւն է ունենում նաև կաթի բաղադրութեան վերայ։ Չոր, ցամաքային կլիմայի կենդանիներն աւելի թանձը և իւղոտ կաթ են տալիս, քան թէ խոնաւ, ծովային կլիմայում։ Այսպէս օրինակ, հողանդական և մի քանի ուրիշ ցեղի կովերը նույսաստանում տալիս են աւելի իւղոտ կաթ, քան թէ միւնոյն կովերը իւրեանց հայրենիցում կամ խոնաւ կլիմայ ունեցող տեղերում։ Ախոռն տարութիւնը պէտք է լինի 12—14 աստիճան անփոփոխ, միայն պէտք է աշխատել միշտ օդը փոփոխել։

Որպէսետև մարմնի մաքրութիւնը խիստ բարերար աղջեցութիւն է ունենում կովերի առողջութեան վերայ, ուստի նորա մաքրութեան մասին միշտ հոգ տանելով, մենք նպաստած կլինենք կաթի աւելանալուն։

Կով կրելու չափն ու ժամանակը։ — Բաւական մեծ աղջեցութիւն է ունենում կաթի քանակի և յատկութեան վերայ նաև այն հանգամանը, թէ կովը օրը քանի անգամ է կթւում և ո՞ր ժամերին։ Գիտութիւնը և փորձը որոշել են, որ ամառը կովերին պէտք է կթել երեք անգամ՝ ա) առաւօտեան արօտի տանելուց առաջ, թ) կէսօրին և գ) երեկոյեան արօտատեղերից վերադառնալուց յետոյ։ Իսկ ձմեռը օրական երկու անգամ՝ առաւօտեան և երեկոյեան։ Նատ տեղեր ամառը երկու անգամ կթելը բարեկան են համարում, պատճառ բերելով, որ իր այդքան անգամ կթելով էլ նոյնքան կաթ կստացուի, որքան և երեք անգամ կթելով։ Բայց այդ սխալ պատճառաքանութիւն է։ Այդպէս անողները պէտք է իմանան, որ դուռանով վնասում են կաթնատու կովերին և զրկւում կաթից։ Փորձուած է, որ երեք անգամ կթելով ոչ թէ միայն կաթի քանակութիւնն է աւելանում, այլ և կաթը աւելի իւղոտ է դառնում, քան երկու անգամ կթելիս։ Առատ կաթ տուող կովերի կաթի քանակը կպակասի, եթէ շուտ շուտ չկթուեն։

Դանիացի յայտնի կաթնատնտես Խեդելունաք վերջերս գըտել է կթելու մի նոր խելացի եղանակ։ Մի կով, որ ամէն անգամ 8, 5 գրվ. զօրեղ կեր, 9, 7 գրվ. շաղդամ և քեւ էլ խոտ էր ստանում, ծնելուց յետոյ ամբողջ երեք շաքաթ շարունակ օրական միայն 8, 5 գրվ. կաթ էր տալիս։ Սկզբներում օրական կթում էին 3 անգամ, բայց յետոյ 8 անգամից ոչ պակաս։ Նոյն

կովը առաջուայ չափ և միենոյն տեսակի կեր ընդունելուց յետոյ սկսեց աւելացնել իւր կաթը և հասցը 22—24, 4 գրվ. և այնուհետեւ այլ ևս չպակասեցը եց, չնայելով որ երեք շաբաթ անցնելուց յետոյ նորից սկսեցին կթել Յ անդամ օրական։ Այդ կովն ամբողջ տարուայ ընթանըում 167 լր. 23 գրվ. կաթ տուեց։ Մինեսոյն փորձերը գործ են գրել նաև ուժից կովի վերայ, որը սկզբներում տալիս էր օրական 12, 2—14, 6 գրվ. կաթ։ Եթե այդ կովն սկսել են կթել օշական 7 անդամ, կաթի քանակը երեք շաբաթուայ ընթացքում բարձրացել է մինչև 35,2 գրվ. և գեռ. 24/2 ամիս անցնելուց յետոյ կովը շարունակել է օրական 37, 7 գրվ. կաթ տալ։ Խեզելունտի տակով այս նոր եղանակով կթելու առաւելութեւնն այն է, որ օրական շատ անդամ կթելու բարերար աղդեցութիւն է ունենում կովի ստինքի գործունելութեան վերայ։

Մի ժամանակ Խերսպայում սովորութիւն կար (այդ սովորութիւնը մասամբ այժմ էլ գոյութիւն ունի) կովերի առաջին ծինից յետոյ մի առժամանակ շուտ շուտ կթել։ Այսպէս օրինակ, ոմանք սկզբի օրերում ամէն 2—3 ժամը մի անդամ էին կթում, ապա 3—4 ժամը մի անդամ և վերջապէս օրը հինգ անդամ։ Այս կերպ շարունակում էին կթել 2—6 շաբաթ, որից յետոյ սկսում էին օրական 4 անդամ և մի քանի ամիս անցնելուց յետոյ 3 անդամ կթել։ Այս կերպ վերաբերուողների թիւը, չնորհիւ աշխատաւոր ձեռների պակասութեան՝ պակասել է, թէպէս մի քանի գործունեայ, աշխատասէր ակարպակատէրեր, և գիւղացիներ մինչև օրս շարունակում են նոյնը։

Կաթի առատութեան և յատկութեան վերայ ազգեցութիւն է ունենում նաև միշտ միենոյն ժամին և հաւատար ժամանակամիջոցներով կթելը։ Փորձուած է, որ միենոյն ժամին կթելով կաթը 10° կաւելանայ։ Օրը երեք անդամ կթելիս իրար մէջ եղած ժամանակամիջոցը պէտք է 8 ժամ լինի, իսկ երկու անդամ կթելիս՝ 12 ժամ (առաւոտեան 5 ժամին և երեկոյեան 5 ժամին)։ Պետք է կթել միշտ կերից առաջ կամ յետոյ, բայց ոչ երբեք կերե ժամանակ, մանաւանդ ձմեռով։ Կթողն անպատճառ պէտք է ճշապահ լինի և ամէն անդամ օրուայ ճիշտ մինենոյն ժամին կթէ։ Երեկոյեան կաթը աւելի հարսւաս է պինդ նիւթերով, քան թէ առաւոտեանը՝ աւելի կարագ և պանրածին է պարունակում։

Գ. Դ.